Արձանագրություն 3

ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-24/4 ծածկագրով վերականգնողական աշխատանքների (ՀՀ Արագածոտնի մարզի Ամբերդ ամրոց, ՀՀ Վայոց Ձորի մարզի Շատիվանք վանական համալիր և ՀՀ Վայոց Ձորի մարզի Գնդեվազ համայնքի Սբ Աստվածածին եկեղեցի) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 13.02.2024թ. ժ.11:00

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Հովսեփյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Իգիթյան /գնահատող/

Սուրեն Շաքարյան /գնահատող/

Արմինե Ստեփանյան /բացող/

Վերգինե Սահակյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Հաշվի առնելով, որ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի գնային առաջարկը էապես գերազանցել է մերժված մասնակցի գնային առաջարկին, հանձնաժողովը հարկ է համարել 06.02.2024թ. պատվիրատուի անունից դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն ստանալու մեթոդական օժանդակություն մերժված մասնակցի գնային առաջարկի գնահատման վերաբերյալ՝ չմատնանշելով մասնակցին և ընթացակարգը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Հաշվի առնելով, որ տվյալ պահի դրությամբ չի ստացվել ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանը, կասեցնել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին պայմանագրի շնորհման գործընթացը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Կասեցնել հանձնաժողովի նիստը և այն շարունակել ՀՀ ֆինանսների նախարարությունից պատասխանը ստանալուց հետո՝ հաջորդ աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 16.02.2024թ. ժամը 11:00-ին

4. 15.02.2024թ ստացվել է ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանը, ըստ որի գնային առաջարկները գնահատելիս անհրաժեշտ է առաջնորդվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգավորումներով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ կրկին կասեցնել հանձնաժողովի նիստը և կրկին դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն խնդրի պարզաբանման համար՝ կոնկրետացնելով դեպքը և կից ներկայացնելով մասնակիցների գնային առաջարկները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6. Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակել ՀՀ ֆինանսների նախարարությունից համապատասխան պարզաբանումը ստանալուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 07.03.2024թ. ժամը 15:00-ին

7. Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարությունից 01.03.2024թ ստացված դիրքորոշումը և ՀՀ ֆինանսների նախարարության հետ քննարկումը՝ հանձնաժողովը որոշեց վերագնահատել **«Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ**-ի հայտը՝ չեղարկել 02.02.2024թ թիվ 2 արձանագրության 6.1 կետով արձանագրված անհամապատասխանությունը և համարել այն բավարար, հաշվի առնելով հաջորդ մասնակցի գնային առաջարկի համեմատ վերջինիս գնային առաջարկի տարբերությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Հիմք ընդունելով սույն արձանագրության 7–րդ կետով վերագնահատման արդյունքները՝ չեղյալ համարել գնահատող հանձնաժողովի 02.02.2024թ թիվ 2 արձանագրության 7.1 և 7.2 կետերով ընդունված որոշումները և հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից 2-րդ չափաբաժնի մասով.

1-ին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից ճանաչել **«Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ**-ին,

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին**:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Հաստատել 2-րդ չափաբաժնի համար պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության նոր՝ վերանայված տեքստը, ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով ՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Հովսեփյան /նախագահ/

---------- Լուսինե Իգիթյան

---------- Սուրեն Շաքարյան

---------- Արմինե Ստեփանյան

---------- Վերգինե Սահակյան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/